ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան «09» դեկտեմբեր 2016թ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Գայանե Հովակիմյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության թիվ 170-Ն օրենքի 7-րդ հոդվածի, հավելված 1-ի՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 9-ին, ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի ծրագրի գծով, իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացման համար հաստատված հատկացումները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված՝ **24 394 600 (քսանչորս միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2.Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների իրականացման շրջանակներում 2016 թվականի պահպանման ծախսերը հոգալու համար անհրաժեշտ գումարը:

1.3.Կազմակերպության կողմից անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերը ներկայացված են սույն պայմանագրի՝ **հավելված 1-ում:**

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.3 Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառումների կատարումը, կամ միջոցառումների իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծառայությունների իրականացման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում սահմանված պահանջներին.

2.1.4 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ստանալ միջոցառումների իրականացման համար նախա
տեսված վճար.

2.2.2 պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 անհրաժեշտության դեպքում աջակցել կազմակերպությանը.

2.3.2իրականացված աշխատանքների մասին ներկայացված ամփոփ հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված

հաշվետվությունների համաձայն կատարված աշխատանքը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը, այլապես այն համարվում է ընդունված:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ օրենքով սահմանված կարգով.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել կազմակերպության կանոնադրությամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով.

2.4.3 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 պետական մարմին ներկայացնել աշխատանքների իրականացման վերաբերյալ ամփոփ հաշվետվություն.

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել աշխատանքների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1. Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպությանը՝ համաձայն ներկայացված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ **(հավելված 2):**

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:
5.2 Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է սույն թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1.Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կազմված է «9» թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	«Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա	Հասցե՝ ք. Երևան, Խորենացու 162ա
Հ/Հ 900011194330	Հ/Հ 163038108342
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկ ԲԲԸ Մյասնիկյան մ/ճ
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 01560755
/ստորագրություն/	/ստորագրություն/
Աշխատակազմի ղեկավար Ա. Գևորգյան	Տնօրեն Գ. Հովակիմյան

Հավելված 1
2016թ. փետրվարի « 09 »-ին
կնքված պայմանագրի

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթական գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը
1.	Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական ուսուցում:	• Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դասընթացների կազմակերպում. 1. Խեցեգործություն 2. Խեցեգործության ներկման և թրծման տեխնոլոգիա 3. Փայտամշակում 4. Ժամանակակից կիրառական արվեստ 5. Զարդարվեստ 6. Բրուտագործություն 7. Դիզայն 8. Մանրանկարչություն 9. Սոցիալական խորհրդատվություն	• «Աբովյան» և «Արմավիր» ՔԿՀ-ում գեղագիտական դասընթացների իրականացում, • զարդակիրառական արվեստի նմուշների պատրաստում, • գեղագիտական ուսուցման խմբակների ստեղծում, • անհատական և խմբային ուսուցման ծրագրերի իրականացում, • հրավիրյալ մասնագետների հետ փորձի փոխանակման դասընթացների	Արդյունք՝ 1.մասնագիտական և մշակութային, հմտությունների զարգացում 2. օգտակար զբաղվածության խթանում: Գնահատման չափանիշները՝ մասնակից անձանց թիվը, առարկայական ցանկը, • դասընթացների իրականացման ծավալն ու հաճախականությունը, մեթոդիկաները, • պատրաստված	2016 թվականի դեկտեմբերի 30

		10. Տարրական գրագիտություն 11. Համակարգչային հմտությունների ուսուցում	կազմակերպում,	զարդակիրառական արվեստի նմուշների քանակը:	
2.	Ցուցահանդեսների, կրթամշակութային միջոցառումների կազմակերպում:	• Ազգային և պետական տոների կապակցությամբ ցուցահանդեսների կազմակերպում և իրականացում: • Կրթամշակութային ցերեկույթների կազմակերպում: • Հրավիրյալ մասնագետների հետ փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում: • Հանրային-լուսավորչական միջոցառումների կազմակերպում:	Քրեակատարողական հիմնարկների և մշակութային կենտրոնների հետ համատեղ կրթամշակութային միջոցառումների իրականացում, այդ թվում՝ • հանրային մշակութային միջոցառումների իրականացում, • թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպում, • դատապարտյալների անհատական աշխատանքների ցուցադրություն, • մրցույթների կազմակերպում, • համերգային միջոցառումների կազմակերպում:	Արդյունք՝ • հանրային մշակութային կյանքին ներգրավում և մասնակցություն: Գնահատման չափանիշները՝ • մասնակից անձանց թիվը, ցուցահանդեսներին ներկայացված անհատական աշխատանքների քանակը, • կազմակերպված միջոցառումների թիվը:	2016 թվականի դեկտեմբերի 30
3.	Պատիժը կրած դատապարտյալների սոցիալական վերականգնում:	• Պատժից ազատված անձանց համար վերաինտեգրման աշխատանքներ սոցիալ-մշակութային ծրագրերի միջոցով: • Արտ-թերապևտիկ աշխատանքների իրականացում:	Պատժից ազատված անձանց համար զբաղվածության կենտրոնների, սոցիալական աջակցության և համայնքային այլ կառույցների հետ համագործակցությամբ սոցիալական, մշակութային բնույթի վերականգնողական աշխատանքների իրականացում, այդ թվում՝	Արդյունք՝ պատիժը կրած նախկին դատապարտյալների՝ հասարակություն արդյունավետ վերաինտեգրում, կրկնահանցագործության նվազեցում: Գնահատման չափանիշները՝	2016 թվականի դեկտեմբերի 30

			• զբաղվածության ապահովում, • կրթության և աշխատանքի ոլորտի խնդիրների հաղթահարում, • խորհրդատվություններ, • համապատասխան կառույցներին ուղղորդումներ:	• իրականացված ծրագրերի ցանկը, • շահառուներիի թիվը:	

/ստորագրություն/

Աշխատանքային խմբի ղեկավար
Ա. Գևորգյան

/ստորագրություն/

Տնօրեն
Գ. Հովակիմյան

Հավելված 2
2016 թ. դեկտեմբերի «09»-ին
կնքված պայմանագրի

ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակություն» ծրագրի գծով 2016 թվականի բյուջետային հատկացումների եռամսյակային (աճողական) սահմանաքանակների վերաբերյալ ժամանակացույց

(հազ. դրամ)

I եռամսյակ	II եռամսյակ	I կիսամյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Տարեկան
4439.8	10294.5	10294.5	16149.2	24394.6	**24394.6**

/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավար

Ա.Գևորգյան

/ստորագրություն/

Տնօրեն

Գ. Հովակիմյան